



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

02.03.2020թ.
ք. Երևան

Դատական գործ
թիվ ՎԴ/11101/05/19

ՈՐՈՇՈՒՄ

Թիվ ՎԴ/11101/05/19 գործի
ենթակայությունը որոշելու մասին

1. Գործի դատավարական նախապայմանությունը և ենթակայության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

1. Ժենյա Մարգարյանը 24.12.2015 թվականին դիմում է ներկայացրել ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ատոմ Հայրապետյանին՝ հայտնելով, որ «քաղաքացի Խաչատուր Հակոբովի մահից հետո ժառանգությունը ցանկացած հիմքով ընդունում է և խնդրում է վավերացնել ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր»:

Դիմումում ժենյա Մարգարյանը հայտնել է նաև, որ բացի իրենից կա նաև այլ ժառանգ՝ Թագուշ Բարուտյանը:

2. Թագուի Հակոբյանը 31.07.2019 թվականին դիմում է ներկայացրել ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ատոմ Հայրապետյանին՝ հայտնելով, որ իր հայրը՝ Վարդան Հակոբյանը մահացել է 27.06.2015 թվականին, իսկ 24.08.2016 թվականին դիմել են նոտարական գրասենյակ՝ ք. Երևան, Աթոյան 17 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունելու համար: Թագուի Հակոբյանը խնդրել է «վավերացնել ժառանգությունը ք. Երևան, Աթոյան 17 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ և իրեն տալ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայական»:

3. «Երևան» նոտարական գրասենյակի նոտար Ատոմ Հայրապետյանի 24.09.2019 թվականի թիվ 79 գրությամբ ժենյա Մարգարյանի լիազորված անձ Նարեկ Ներսիսյանի 23.09.2019 թվականի դիմումին ի պատասխան հայտնվել է, որ ժենյա Մարգարյանի

խնդրանքը ենթակա չէ կատարման, քանի որ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 81.1-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ նոտարն ընդունում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու վերաբերյալ նոտարական ակտ, եթե իրավաբանական նշանակություն ունեցող փաստն անվիճելի է:

4. 24.12.2019 թվականին ժենյա Մարգարյանը հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան ընդդեմ «Երևան» նոտարական տարածքի նոտար Ատոմ Հայրապետյանի՝ խնդրելով ոչ իրավաչափ ճանաչել 01.10.2005 թվականին մահացած Խաչատուր Սարգսի Հակոբովի ժառանգության վերաբերյալ ժենյա Մարգարյանին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելու՝ «Երևան» նոտարական տարածքի նոտար Ատոմ Հայրապետյանի 24.09.2019 թվականի թիվ 79 մերժումը և պարտավորեցնել «Երևան» նոտարական տարածքի նոտար Ատոմ Հայրապետյանին ժենյա Մարգարյանին տալ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ 01.10.2005 թվականին մահացած Խաչատուր Սարգսի Հակոբովի սեփականությունը հանդիսացած՝ ք. Երևան, Աթոյան փողոց, 17 տուն հասցեի անշարժ գույքի 3/4 մասի նկատմամբ:

5. Վարչական դատարանը (դատավոր՝ Լ. Հակոբյան) 08.01.2020 թվականին որոշում է կայացրել հայցադիմումը վերահասցեագրելու մասին՝ հետևյալ հիմնավորմամբ. *«(...) սույն վեճի առանցքում իրավական վեճն է հայցվոր ժենյա Մարգարյանի և Թագուհի Հակոբյանի միջև ժառանգական զանգվածի առնչությամբ: Դատարանի գնահատմամբ, սույն վեճի հիմքը ոչ թե նոտարի գործողությունների վիճարկումն է, այլ՝ ժառանգման իրավահարաբերություններից բխող, ժառանգական զանգվածի նկատմամբ իրավատեր լինելու կապակցությամբ ժառանգների միջև ծագած վեճը: Հետևաբար, դատարանը գտնում է, որ առկա է հայցադիմումը վերահասցեագրելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքը, և հայցադիմումը պետք է վերահասցեագրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանին (...):»:*

6. 01.02.2020 թվականին թիվ ՎԴ/11101/05/19 դատական գործը մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Բադիրյանին և 05.02.2020 թվականին հանձնվել է դատավորին:

7. 04.02.2020 թվականին ժենյա Մարգարյանի ներկայացուցիչ Նարեկ Ներսիսյանը դիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով որոշում կայացնել սույն գործի ենթակայության հարցը որոշելու համար գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին:

8. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Ա. Բադիրյան) 14.02.2020 թվականին կայացրած որոշմամբ վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ գործի ենթակայությունը որոշելու:

խնդրանքով: Որոշմամբ մասնավորապես նշվել է հետևյալը. «(...) նոտարական գործողության կատարման մերժումը ոչ իրավաչափ ճանաչելու և որպես հետևանք՝ նոտարին՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տալը պարտավորեցնելու պահանջների վերաբերյալ գործի քննությունը օրենքով ուղղակիորեն վերապահված է ՀՀ վարչական դատարանին (...):»:

9. Թիվ ՎԴ/11101/05/19 դատական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 24.02.2020 թվականին:

II. Կիրառելի իրավական նորմերը, պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են՝

1) նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը.

2) նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի

ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով:

11. Վերը նշված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանն է հանձնել դատական կարգով քննության ենթակա այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության¹ շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերից ծագող գործերը: Ըստ այդմ, օրենսդիրը, որպես հատուկ վարույթի տեսակ, վարչական դատարանի ընդդատության շրջանակում ներառել է նաև նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործերը:

Փաստորեն, դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է հիմք ընդունելով կոնկրետ իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային):

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ օրենսդիրը վարչական դատարանի ընդդատության և առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ենթակայության կանոնների խախտման դեպքում նախատեսել է տարբեր իրավաբանական հետևանքներ:

Այսպես՝ ի տարբերության քաղաքացիական դատավարության, որտեղ ենթակայության կանոնների խախտումը հայցադիմումի ընդունելության փուլում հանգեցնում է հայցադիմումի ընդունումը մերժելուն, վարչական դատավարությունում հայցվորի կողմից ընդդատության կանոնները չպահպանելու հետևանքը հայցադիմումը վերահասցեագրելու՝ վարչական դատարանի լիազորության կիրառումն է: Վերոգրյալ կարգավորումների տարբերությունը պայմանավորված է վարչական արդարադատության առանձնահատկություններով, մասնավորապես՝ վարչական դատավարությունում դատարանի ակտիվ դերակատարմամբ:

Գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքով պայմանավորված՝ վարչական դատարանը վերահասցեագրման ինստիտուտը կարող է կիրառել գործի քննության ցանկացած փուլում, քանի որ որոշ դեպքերում հայցադիմումի ընդունելության փուլում հնարավոր չէ միանշանակ եզրահանգել հայցադիմումի

¹ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը վարչական դատարանի և առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի միջև գործերի բաշխումը կատարում է **ընդդատության** նորմերի միջոցով, մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը միևնույն հարցը կարգավորում է **ենթակայության** նորմերով: Ուստի սույն որոշման մեջ «**ընդդատություն**» և «**ենթակայություն**» եզրույթները կիրառվում են միևնույն իմաստով և տվյալ դեպքում ցույց են տալիս դատական գործերի բաշխումը վարչական դատարանի և ընդհանուր իրավասության դատարանի միջև:

պահանջը վարչական դատարանին ընդդատյա չլինելու վերաբերյալ: Այսինքն՝ պահանջի ընդդատության վերաբերյալ կասկած լինելու դեպքում վարչական դատարանը պետք է հայցադիմումն ընդունի վարույթ, պարզի գործի հանգամանքները, որից հետո միայն, եզրակացնելով, որ գործն իրեն ընդդատյա չէ, այն վերահասցեագրի ըստ ընդդատության:

Այսպիսով, յուրաքանչյուր դեպքում վարչական դատարանը պարտավոր է պարզել՝ արդյոք կոնկրետ գործն ընդդատյա է (ենթակա է) տվյալ դատարանին, թե՛ ոչ, և նշված հարցի կապակցությամբ բացասական եզրահանգում կատարելու դեպքում պարտավոր է հայցադիմումը վերահասցեագրել ըստ ընդդատության: Ընդ որում, հայցադիմումի ընդունելության փուլում վարչական դատարանը կիրառում է վերահասցեագրման ինստիտուտը, եթե հայցադիմումից և կից փաստաթղթերից միանշանակ հնարավոր է կատարել ընդդատության վերաբերյալ բացասական եզրահանգում: Հակառակ դեպքում, վարչական դատարանը, պահանջն ըստ ընդդատության վերահասցեագրելու իրավասությունը կարող է իրացնել միայն հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ գործի քննության մյուս փուլերում:

12. Վերոգրյալի համատեքստում գտնում են, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և Վարչական դատարանի միջև սույն գործի քննության ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու և առկա իրավակարգավորումների հիման վրա գործի ենթակայությունը որոշելու համար էական նշանակություն ունի հետևյալ հարցը. ***հայցվորի կողմից դատարանի քննությանը հանձնված վեճը արդյո՞ք բխում է հանրային, թե մասնավոր իրավահարաբերություններից:***

13. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին մանրամասն անդրադարձ է կատարվել Վճռաբեկ դատարանի՝ «Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության թիվ ՎԴ/0830/05/14 վարչական գործով 22.04.2016 թվականի որոշմամբ:

Այդ որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ինչպես ցանկացած հարաբերություն, այնպես էլ իրավական նորմերի միջոցով կարգավորվող հասարակական հարաբերությունը՝ իրավահարաբերությունը, որոշակի փոխկապակցված տարրերի (սուբյեկտ, օբյեկտ և բովանդակություն) ամբողջություն (համակարգ) է, որոնց բովանդակային-որակական տարբերությունը հնարավորություն է տալիս իրավահարաբերությունները տարանջատելու միմյանցից: Մասնավորապես՝ հանրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական

մարմիններ, դրանց պաշտոնատար անձինք, այդ թվում՝ պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ:

Իրավահարաբերության բովանդակությունը տվյալ հարաբերության սուբյեկտների փոխադարձ իրավունքների և պարտականությունների ամբողջությունն է, որը հանրային բնույթի իրավահարաբերության պարագայում հանգում է հետևյալին. այդ հարաբերության կողմ հանդիսացող հանրային իշխանության սուբյեկտն ունի օրենքով սահմանված իր իշխանական լիազորություններն իրականացնելու պարտականություն, ինչն էլ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների իրացման անհրաժեշտ և բավարար պայմանն է:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հանրային իրավահարաբերության սուբյեկտ հանդիսացող իշխանության մարմինը հանրային իրավահարաբերության շրջանակներում կարող է օժտված լինել ոչ թե իրավունքներով, այլ մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկն ընտրելու, այսինքն՝ օրենքով սահմանված որոշակի դեպքերում և բավարար փաստական հիմքերի առկայության պայմաններում վարչական հայեցողություն դրսևորելու հնարավորությամբ: Միևնույն ժամանակ հանրային իրավահարաբերության՝ իշխանական լիազորություններով չօժտված կողմը, բացի իր հանրային սուբյեկտիվ իրավունքներից, կարող է կրել նաև այդ հարաբերության բովանդակության մեջ ներառված պարտականություններ, քանի որ ֆիզիկական և իրավաբանական անձինք իրենց հանրային սուբյեկտիվ իրավունքներն իրացնելիս պետք է պահպանեն նորմատիվ իրավական ակտերով սահմանված ընթացակարգային իրավական կարգավորումներն ու օրենսդրական բոլոր պահանջները:

Իրավահարաբերության օբյեկտն այն նյութական և (կամ) հոգևոր արժեքն է, ինչի կապակցությամբ որոշակի իրավաբանական փաստի (փաստական կազմի) հիման վրա կողմերի միջև ծագում է իրավահարաբերությունը: Հանրային իրավահարաբերությունները ծագում են հանրային շահը սպասարկող սուբյեկտների՝ պետության և համայնքի կողմից այն իրացնելու և կյանքի կոչելու, սոցիալական ոլորտում այն առարկայացնելու կապակցությամբ, քանի որ հանրային իրավունքով կարգավորվող հարաբերության շրջանակներում սուբյեկտը գործում է ոչ թե իր, այլ հանրային շահերի վերհանման և ապահովման նպատակով:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ իրավունքում «շահ» հասկացության դասակարգումը հանրայինի և մասնավորի խիստ պայմանական է, քանի որ հանրային և մասնավոր շահերը հանդես են գալիս փոխկապակցվածության մեջ և գրեթե միշտ փոխլրացնում են միմյանց: Այսպես, իրավական շահը դասակարգվում

է հանրայինի և ոչ հանրայինի՝ դասակարգման հիմքում դնելով այդ շահը կրող սուբյեկտին. հանրային շահի կրողը հասարակությունն է՝ որպես մեկ միասնական, ամբողջական օրգանիզմ: Ընդ որում, շահը հանրային որակելու համար պարտադիր նախապայմանն է հասարակության բոլոր անդամների կողմից այդ շահի ընկալելի, ընդունելի լինելու հանգամանքը: Սակայն հանրային շահը տարբերվում է մասնավոր շահից ոչ միայն սուբյեկտային չափանիշով, այլ նաև իր առարկայով, քանի որ հանրային շահի առարկան համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներն են, որոնց առարկայացումը հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայման է հասարակության գոյատևման և հետագա զարգացման համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՛ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՛ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՛ ոչ:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը²:

14. Գտնում են, որ սույն գործով վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելու համար անհրաժեշտ է վերլուծել Ժենյա Մարգարյանի, նոտարի («Երևան» նոտարական տարածքի նոտար Ատոմ Հայրապետյանի) և Թագուհի Հակոբյանի միջև ծագած վեճի էությունը, որը Ժենյա Մարգարյանի հայցով բարձրացվել է Վարչական դատարանի առջև, ապա ուղարկվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

15. Սույն գործի նյութերում առկա տվյալների համադրության արդյունքում կարելի է գալ այն եզրահանգման, որ սույն գործով դատարանի առջև բարձրացված վեճի հիմքում ընկած են Խաչատուր Հակոբովի մահից հետո նրան պատկանող՝ Երևան քաղաքի Աթոյան 17 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ ժառանգությունն

² Տե՛ս «Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության թիվ ՎԴ/0830/05/14 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը:

ընդունելու հետ կապված հասարակական հարաբերությունները, որոնք իրենց մեջ կարող են ունենալ թե՛ հանրային-իրավական, թե՛ մասնավոր իրավական բաղադրիչ:

Սույն գործի նյութերում առկա տվյալները վկայում են, որ տվյալ դեպքում Խաչատուր Հակոբովի ժառանգությունն ընդունելու մասին նոտար Ատոմ Հայրապետյանին դիմումներ են ներկայացրել հայցվոր Ժենյա Մարգարյանը և Թագուհի Հակոբյանը:

Հայցադիմումին կից ներկայացված՝ «Երևան» նոտարական գրասենյակի նոտար Ատոմ Հայրապետյանի 24.09.2019 թվականի թիվ 79 գրությամբ Ժենյա Մարգարյանի լիազորված անձ Նարեկ Ներսիսյանի՝ 23.09.2019 թվականի դիմումին ի պատասխան հայտնվել է, որ Ժենյա Մարգարյանի խնդրանքը ենթակա չէ կատարման, քանի որ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 81.1-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ նոտարն ընդունում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու վերաբերյալ նոտարական ակտ, եթե իրավաբանական նշանակություն ունեցող փաստն անվիճելի է:

Մյուս կողմից՝ հայցադիմումում հայցվորը նշել է, որ 23.09.2019 թվականին նոտարական գրասենյակ մուտքագրված դիմումով խնդրել է տալ ժառանգության իրավունքի վկայագիր կամ տրամադրել հայցվող գործողության կատարումը մերժելու վերաբերյալ նոտարական ակտ: Հայցվորը, հայցադիմումում որպես իրավական հիմք վկայակոչելով «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 20-րդ, 36-րդ, 36.1-րդ և 52-րդ հոդվածները, նշել է, որ նոտարական գործողության կատարումը մերժվել է ոչ միայն ժառանգության իրավունքի վկայագիր տալու հետ կապված իրավահարաբերությունների նկատմամբ կիրառման ոչ ենթակա իրավանորմի վկայակոչմամբ, այլև առանց որևէ փաստական հանգամանք նշելու:

16. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1184-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության դեպքում մահացածի գույքը (ժառանգությունը) անփոփոխ վիճակում, որպես միասնական ամբողջություն, անցնում է այլ անձանց (համապարփակ իրավահաջորդություն), եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքի կանոններով:

Նույն օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները:

Նույն օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի:

Նույն օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը (...):

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոտարն իրականացնում է հետևյալ նոտարական գործողությունները. (...) (3) տալիս է ժառանգության իրավունքի վկայագրեր (...):

Նույն օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոտարը նոտարական գործողության կատարումը մերժում է, եթե՝

1) նոտարական գործողության կատարումը հակասում է օրենքին, իրավական այլ ակտերին կամ կազմակերպության կանոնադրությանը.

2) ներկայացված փաստաթուղթը կամ պահանջվող նոտարական գործողությունը ենթակա չէ նոտարական վավերացման կամ հաստատման.

3) օրենքի համաձայն նոտարական գործողությունը ենթակա չէ տվյալ նոտարի կողմից կատարման.

4) նոտարական գործողություն կատարելու մասին խնդրանքով դիմել է անգործունակ անձ կամ անհրաժեշտ լիազորություններ չունեցող անձ կամ նրա անգործունակ կամ անհրաժեշտ լիազորություններ չունեցող ներկայացուցիչ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

5) նոտարական գործողության կատարման համար դիմած անձը թեև գործունակ է, սակայն տվյալ պահին գտնվում է այնպիսի վիճակում, որ չի հասկանում իր գործողությունների նշանակությունը կամ չի կարող կառավարել դրանք.

6) դիմող անձը հրաժարվում է ներկայացնել նոտարական գործողության կատարման համար օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը.

7) դիմող անձը չի վճարում նոտարական գործողության կատարման համար նախատեսված պետական տուրքը կամ նոտարի մատուցած այլ ծառայությունների վճարը.

8) նոտարական գործողությունը պետք է կատարվի դատարանի, դատախազի կամ քննիչի որոշմամբ հետախուզվող և քրեական պատասխանատվությունից խուսափող անձի կամ նրա գույքի նկատմամբ (...):

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նոտարը, նույն հոդվածով նախատեսված նոտարական ծառայություններից բացի, տրամադրում է հետևյալ ծառայությունները. (...) (4) հաստատում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր:

Նույն օրենքի 81.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոտարը հաստատում է այն փաստերը, որոնցից կախված են քաղաքացիների կամ իրավաբանական անձանց անձնական կամ գույքային իրավունքների ծագումը, փոփոխումը կամ դադարումը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նոտարը հաստատում է հետևյալ փաստերը.
(...) (4) ժառանգությունն ընդունելը և ժառանգության բացման վայրը (...):

Նույն հոդվածի 9-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ նոտարն ընդունում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու վերաբերյալ նոտարական ակտ, եթե իրավաբանական նշանակություն ունեցող փաստն անվիճելի է:

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 9-րդ մասի պահանջները պահպանված չլինելու դեպքում նոտարը մերժում է փաստի հաստատումը:

Վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ ժառանգությունն ընդունելու եղանակներն են ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը կամ ժառանգված գույքը փաստացի տիրապետելը կամ կառավարելը: Փաստորեն, ժառանգի կողմից ժառանգության ընդունումը հաստատվում է և ժառանգության վկայագիրը տրամադրվում է նոտարի կողմից:

Հարկ է նկատել, որ ժառանգության ընդունման հետ կապված հարաբերությունների շրջանակում նոտարն իրավասու է ինչպես կատարելու նոտարական գործողություն՝ տալ ժառանգության իրավունքի վկայագիր, այնպես էլ հաստատելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստ՝ ժառանգությունն ընդունելը: Ընդ որում, ժառանգությունն ընդունելու փաստի հաստատումը օրենսդրի կողմից դիտվում է որպես նոտարական ծառայության տրամադրում:

Այսպիսով, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ ժառանգության ընդունման հետ կապված հարաբերություններից ծագող վեճը կարող է վերաբերել ժառանգության իրավունքի վկայագիրը տալու կամ այդ գործողության կատարումը մերժելու իրավաչափությանը:

Բացի այդ, եթե նոտարը մերժել է ժառանգության ընդունման իրավաբանական փաստի հաստատումը, ապա այդ փաստը կարող է հաստատվել դատական կարգով:

Այսպես՝ Հայաստանի Հանրապետությունում գործում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի՝ դատական կարգով հաստատման հետևյալ կառուցակարգը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հատուկ վարույթի կարգով քննում է հետևյալ գործերը. (1) իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ գործերը (...):

Նույն օրենսգրքի 237-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը, գործերի տարածքային ընդդատությանը համապատասխան, հաստատում է այն փաստերը, որոնցից կախված է քաղաքացիների կամ իրավաբանական անձանց անձնական կամ գույքային իրավունքների ծագումը, փոփոխումը կամ դադարումը:

Նույն օրենսգրքի 239-րդ հոդվածի համաձայն՝ դատարանն իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատում է միայն այն դեպքում, եթե դիմողը հնարավորություն չունի այլ կարգով ստանալու այդ փաստը հավաստող պատշաճ փաստաթղթեր կամ անհնար է վերականգնել կորցրած փաստաթղթերը:

Վերոգրյալ իրավանորմերից և սույն որոշման 15-րդ կետում վկայակոչված իրավադրույթներից հետևում է, որ քաղաքացիների կամ իրավաբանական անձանց անձնական կամ գույքային իրավունքների ծագումը, փոփոխումը կամ դադարումը պայմանավորող իրավաբանական փաստերի հաստատումը կարող է կատարվել երկու եղանակով՝ նոտարի և դատարանի կողմից: Ընդ որում, նոտարի կողմից իրավաբանական փաստի հաստատման պայմաններից մեկը փաստի անվիճելիությունն է, իսկ հակառակ դեպքում՝ փաստի հաստատումը ենթակա է նոտարի կողմից մերժման:

Այն դեպքում, երբ անձն ընտրում է իրավաբանական փաստը քաղաքացիական դատավարության կարգով հաստատելու եղանակը, ապա, ի թիվս այլնի, պետք է հիմնավորի, որ հնարավորություն չունի այլ կարգով ստանալու այդ փաստը հավաստող պատշաճ փաստաթղթեր կամ անհնար է վերականգնել կորցրած փաստաթղթերը: Ընդ որում, այդ դեպքում նոտարի կողմից իրավաբանական նշանակության փաստի մերժումը կարող է ծառայել որպես այդ փաստը հավաստող պատշաճ փաստաթուղթն այլ կարգով ստանալու հնարավորության բացակայությունը հավաստող ապացույց:

17. Հարկ է նկատել, սակայն, որ Ժենյա Մարգարյանի 23.09.2019 թվականի դիմումը հայցադիմումին կցված չլինելու պայմաններում հնարավոր չէ պարզել՝ Ժենյա Մարգարյանն իրականում դիմել է նոտարին իրավաբանական փաստ հաստատելու, թե ժառանգության իրավունքի վկայագիր տալու խնդրանքով:

Այսպես՝

17.1. Եթե նշված դիմումով Ժենյա Մարգարյանը նոտարից խնդրել է հաստատել որևէ իրավաբանական փաստ, ապա դրա մերժման դեպքում Ժենյա Մարգարյանն ունի դատական պաշտպանության արդյունավետ միջոց: Մասնավորապես՝ Ժենյա Մարգարյանն իրավունք ունի դիմել ընդհանուր իրավասության դատարան՝ քաղաքացիական դատավարության կարգով իրավաբանական նշանակության փաստի հաստատման դիմումով:

17.2. Եթե 23.09.2019 թվականի դիմումով Ժենյա Մարգարյանը նոտարից խնդրել է իրեն տալ ժառանգության իրավունքի վկայագիր, ապա դրա մերժման արդյունքում ծագած վեճի ենթակայությունը (ընդդատությունը) ենթակա է պարզման *թիվ ՎԴ/4901/05/11 վարչական գործով 27.11.2015 թվականի որոշմամբ* Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների կիրառմամբ:

Նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանը, մասնավորապես, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելիս նոտարն իրականացնում է հանրային գործառույթ, քանի որ ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրումը մերժելիս նոտարի և քաղաքացու միջև առկա են ոչ թե

կորրոկցիոն (համադասություն) բնույթի, այլ սուբորդինացիոն (ենթակայություն) բնույթի իրավահարաբերություններ: Սույն իրավահարաբերություններում քաղաքացին և նոտարը հանդես չեն գալիս որպես մասնավոր իրավահարաբերությունների հավասար սուբյեկտներ: Նման իրավահարաբերություններում նոտարն օժտված չէ կամքի ազատությամբ, այլ հանդես է գալիս որպես հանրային իրավահարաբերությունների սուբյեկտ, որտեղ իրավահարաբերության մասնակիցներից մեկը, միակողմանի հիմնվելով իրավական կարգավորումների վրա, իրավահարաբերության մյուս կողմի համար պարտադիր որոշում է կայացնում: Այսպիսով, օրենսդիրը նոտարական գործողության կատարման իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերն ընդդատյա է համարել վարչական դատարանին, քանի որ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը: Հետևաբար այն դեպքերում, երբ վեճը վերաբերում է ոչ թե հանրային իրավահարաբերություններին, այլ մասնավոր իրավահարաբերություններին, մասնավորապես՝ ժառանգական իրավունքին, ապա տվյալ գործերը վարչական դատարանում քննության ենթակա չեն³:

18. Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ սույն որոշման 17.1. և 17.2. կետերը կիրառելու համար առաջին հերթին ենթակա է պարզման ժենյա Մարգարյանի 23.09.2019 թվականի դիմումի բովանդակությունը:

Դրանից բացի, անհրաժեշտ է հաշվի առնել, որ հայցադիմումը բովանդակում է նոտարական ակտին օրենքով ներկայացվող պահանջները պահպանված չլինելու մասին փաստարկներ:

Այսպիսով, հայցադիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում նախ պարզ չէ՝ արդյոք ժենյա Մարգարյանի կողմից բարձրացված հարցը վերաբերում է ժառանգության ընդունման իրավաբանական փաստի հաստատմանը, թե՛ նոտարի կողմից ժառանգության իրավունքի վկայագիր տալը մերժելուն: Երկրորդը՝ տվյալ դեպքում պարզ չէ, թե սույն վեճը ծագում է ժառանգական մասնավոր իրավահարաբերություններից, որոնց կողմերը ենթադրյալ ժառանգներն են, թե՛ պահանջն ուղղված է նոտարի բուն գործողության դեմ: Այսինքն՝ տվյալ դեպքում պարզ չէ, թե որն է դատական քննության առարկան՝ ժառանգական գույքի նկատմամբ ենթադրյալ ժառանգների սեփականության իրավունքի ճանաչումը, թե՛ նոտարի կողմից իր հանրային գործառույթի իրականացման իրավաչափության ստուգումը:

19. Գտնում եմ, որ վարչական դատարանը միայն վերը նշված հանգամանքները պարզելուց հետո կարող էր հստակ և փաստարկված եզրահանգում կատարել սույն գործով վիճելի իրավահարաբերության՝ մասնավոր կամ հանրային բնույթի վերաբերյալ, որից հետո միայն կարող էր կատարել համապատասխան իրավաչափ դատավարական

³ Տե՛ս Սերժիկ Պողոսյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի թիվ ՎԴ/4901/05/11 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը:

գործողություն: Վերոգրյալի հիման վրա կարելի է եզրակացնել, որ վերահասցեագրման ինստիտուտը սույն գործի քննության տվյալ փուլում կիրառելի չէր:

20. Այսպիսով, հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա տվյալները բավարար չեն դատական պաշտպանության դիմելու հայցվորի իրական շահագրգռվածության առարկան և սույն գործով վիճելի իրավահարաբերության բնույթը հստակ որոշելու համար, գտնում եմ, որ գործի քննության ներկայիս փուլում գործը ենթակա է այն դատարանին, որին ի սկզբանե դիմել է հայցվորը: Այսինքն՝ թիվ ՎԴ/11101/05/19 դատական գործը (գործում առկա նյութերից բխող հանգամանքների համատեքստում) ենթակա է Վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները, և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ ՎԴ/11101/05/19 դատական գործը ենթակա է Վարչական դատարանի քննությանը:

2. Սույն որոշումը և թիվ ՎԴ/11101/05/19 դատական գործն ուղարկել Վարչական դատարան:

3. Որոշման մեկ օրինակն ուղարկել Երևան քաղաքի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարան:

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ